

Համար , պէտք էր ըլլալ կամ հանճար մը կամ տգէտ մը — կամ հանճար մը զայն նուաճելու — կամ տգէտ մը կրելու առանց չափելու զայն — և ինքն ոչ մէկն էր և ոչ մէկալն :

Միայն զայն ըմբռնելու չափ միտք ունէր , և ոչ էր հանճարսի կերպաւութելու զայն :

Առանձնական մարդ մ'էր — և առանձնականին պատասխանատուութիւններն և աղատութիւնները չունէր , — իշխան մ'էր և իշխանութեան և ոչ այն բանն ունէր որ զայն տանելի կ'ընէ — զիշխանութիւնն :

Իշխանութեան հետամուտ մ'էր . . . ծննդեան պարտուցն համար — և բոլոր իշխանութեան հետամուտ եղողներէն ամենէն թշուառագոյնն — վասն զի իրեն համար բան մը չէր պահանջեր , և ամենայն ինչ պէտք էր ուրիշին համար պահանջել :

Այս իրեն վիճակին ամեն ցաւերն ունէր — աքսորէն սկսեալ — ոչ մէկ մսիթարութիւն մը , և ոչ իսկ առերևոյթ յուսոյ :

Սլէկ ըրաւ մեռնիլն — ինչպէս իր հօրն հօրեղօրորդին՝ Ա . Նաբոլէնին որդին — ծնեալ թագաւոր Հռովմայ , մեռեալ դուքս Ռէխշդատի : — Անկէ աւելի երջանիկ , մեռաւ Զուլոներէն սպաննուելով , — մինչդեռ մէկալը դատարկութենէ մայուելով մեռաւ :

Պատմութեան սահմանուած՝, անոր մէջ ուրիշ բան չմողուց բայց երկութեական — իրեն ծննդեանն և իրեն մահուանն : Ճակատագիր էր որ իր առաջին ճիշն և յետին հառաջանքն հաւասարապէս պիտի լիցունէին զաշխարհ անոնցմով , և իրմով :

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Գաղրականորդիւն Հայոց 'ի ջաւաս . . . Ազգային թղթակից մը 'ի ջաւայէ , Պ . Գէորգ Գասպարեան հետևեալ տեղեկութիւնը կու տայ այն տեղի Հայոց գաղթականութեան վրայ :

Ի սկիզբն ութեասներորդ գարուն , սկսան Հայք գաղթիլ 'ի կղզին ջաւաս , յուսով գամագիւտն գոլոյ առաւելագունի յառաջադիմութեան տուրեատիկ շահավաճառութեամբ . և արդարել յոլովք յաջողեցան բնատուր ճարտարութեամբ իւրեանց և բնական՝ ձըրիւք ըստ սովորականին՝ առնել հսկայաբայլ և արժանագով յառաջադիմութիւն , զուգընթաց գրեթէ ընդ եւրոպացի գրացեաց նկրտելով յասպարիզի շահավաճառութեան : Բայ ծանօթութեան ժամանելու պահին գողութիւն առաջաւ առաջաւ աղբերաց 'ի տեղեկութիւն գրչիս , շահ վաճառա-

կանութեան նոցա յայնժամ յաճախ հաւասար էր ընդ գրամագլխոյն , որով մարթացան 'ի սակաւ ժամանակի կուտել զմեծագանձ նոխութիւնն : Ի գաղութմա աստ ականաւոր եղեն հետզհետէ հայրենասիրական պերճ հանդիպիք և ազգասիրական ջանիք , նամանաւանդ մեծարոյք յաշս տեղական Պետութեան , Աղա Գէորգ Մանուկ Մանիշարեանց , Աղա Յովհէփ Ամիրեան , Աղա Յակոբ Յարութիւն , Պարոն Մարգար Ա. Ենիկմանեան , երեքին եղբարք Պօղոս , Բարսեղ և Կարապետ Անդրէասեանք , երջանկայիշատակ երկրին հարազատ քորք Տիկին Մարիամ Յակոբ Յարութիւնեան , և օրիորդ թագուհի Մանուկեան , որոց աստուածահանոյ և գովանի առատաձեռնութեանն չնորհք , և ազգասիրութեան պերճ և

սիրալի հանդէպ՝ գեղապարոյր ցոլացեալ՝ ի սոսա՝ ծանօթ են բազմաց համազեաց հետախուզից : Ի կաճառս ճշմարիտ ազգասիրաց կողմանցս դասինա և 'ի նորոյ հանգուցեալ Պարոն Մանուկ Որդանանեան առաքինազարդ այրն ։ Զարդիս իսկ սիրելի է ինձ խոստովանել, զի դատանին՝ ի գաղութս աստարք ազգասէրը, հետեւոք քաջարի նախնեաց իւրեանց, որոց վառեալ՝ ի միտս զառաքինի և մեծագործ Հայրենասիրացն զյիշատակս, կազմեալ ունին զանազան ազգային Հաստատութիւնս, յորոց գլխաւորը են Մանուկ և Յարութիւն ուստումմարան, Հայկեան Միաբանութիւնն Զաւայ, Մնտուկ՝ ի պէտս աղքատաց Զուղայու, Գանձանակ զրաւոր աշխատանաց, և այն : — Ի նորոյ ձեռնարկեալ են նաև հաստատել ազգային Սահմանադրութիւնն վաւերացուցեալ՝ ի տեղական կառավարութենէ տեղւոյս, բուն նպատակ և վախճան որոյ է յապահովի պահել զագգային գոյս՝ ի զէպս աւաղելի ինչ հանգամնաց կամ ձախողակի պատահարաց ապագայից : — Այսչափ և այսպիսի վերանորոգութիւնը և փոյթք ցանկալի և պաշտելի պարտին անջուշտ կացուցանել յապագայս՝ զյիշատակ առջիկայ գովանի ջանից ազգայնոց կողմանցս, որոց գովանի օրինակին երանիթէ հետևողը գտանէին և միւս Հընդկաբնակ աղքայինք :

Ի տեղեկովիւն հեռարնակ աղդայնոց, արժան համարիմ այժմ տալ՝ ի սոսորն զթիւ համօրէն Հայազդի բնակչաց և գաղթականաց Հայոց՝ ի Զաւա, կալեալ՝ ի 1879 ամիս .

Արուք	Էրք	Բովանդակ.
Բաթավիա	42	34 76
Մարանդ	20	4 24
Սուրբայիա	30	16 46
	92	54 146

Զինոց պարիսպը. — Այս հսկայական շինուածքին մեծագործութիւնը կը գերազանցէ քան զամեն ճարտարապետական հրաշալիս թէ հնոց և թէ արդեաց : Եգիպտոսի բրդունքը, հոռվմէական յրանցք, նորոց կամուրջներն ու գետնափոր ճամբաներն երկաթուղաց անոնց համեմատութեամբ ոչինչ են : Ամերիկացի ճարտարապետ մը, որ հիմայ երկաթուղուց մը շինութեանը կը պարապի ի Զինս, մասնաւոր մտադրութեամբ քններ է այն պարիսպը, և Հետեւեալ տեղեկութիւնները կու տայ այն վիթխարի շնչքին վրայ, որ շկարծուիր մարդու ձեռագործ : Երկայնութիւնն է 360 գերմանական մղնն, այսինքն աւելի քան 2671 քիլոմէրը բարձրութիւնը՝ 18 ոտք և լայնութիւնը՝ 15 ոտք : Հիմունքը կրանիդ են, և մնացածը մեծազանգուած վէմք և քարինք մէկտեղ խառնուած : Ամեն մէկ 200 կամ 300 քայլ հեռաւորութեամբ քառակուսի շնչք մը կայ՝ որ իւրաքանչիւր անկիւնն աշտարակ մ'ունի, 25-30 ոտք բարձր և 24 ոտք թանձր : Աշտարակաց վերին շրջանակին երկու կողերը պաշտպանուած են որմնարգելներով, այնպէս որ զինուորք կրնան մէկ աշտարակին միւսն անցնիլ անվտանգ տեսնուելու ի թշնամեաց : Պարիսպը կը ձգուի դժուարուած տեղեաց վրայէն, և կ'անցնի առանց ընդհատութեան լեռներ, գաշտեր, ճահճներ, և շատ անգամնաև գահամիչներ 100 ոտք խորութեամբ . հեղեղատներու և մանր գետերու վրայ կամուրջ ձգուած են, իսկ մեծամեծ գետերու երկու ափանցը վրայ ամրապատ աշտարակներ կանգնուած են : Այս պարապին շինութիւնը հասարակ թուականութենէն 200 տարի առաջ կատարուած է, Զինու երկերը թաթարաց արշաւանքէն պաշտպանելու համար : Այս հսկայական ձեռագործին շինութեանն համար ու

դիտէ որչափ ժամանակ անցեր է, ինչ-
պէս նաև ի՞նչ գանձեր սպառեր են :
Խոկ անտարակուսելին այն է որ միլիո-
նաւոր մարդկեղէն բազուկք աշխատեր
են այն շէնքը կանգնելու :

Հանքածուին յլննդդիա և 'ի դեկ-
ձիա . — Հանքածիոյ գիւտն առա-
ջին անգամ եղաւ յլննդդիա, յամին
1,180, և այն թուականէն սկսեալ այն-
շափ այս հանքս աճեցաւ՝ որ հիմայ կըր-
նայ ըստիլ թէ Անգլիոյ հոխութեանց
գլխաւոր աղբեւրներէն մէկն է :

Յամին 1660 Անգլիա կ'արտադրէր
2,250,000 տակառաշափ հանքածուիս .
Երկու գար ետքը, յամին 1876, կ'ար-
տադրէր 185,000,000 տակառաշափ
հանքածուիս : Եւ Անգլիոյ մէջ կը կար-
ծուի թէ ըլլայ զեռ ևս 400 հազար
միլիոն տակառաշափ մշակելի հանք-
ածուիս :

Հանքածուիսը փոխադրելու համար
տարիին կը գործածուին 3455 շոգենավք:

Գեճիոյ մէջ աւելի քան 1300 քա-
ռակուսի քիլոմետր ածխարեր երկիր
կայ . գլխաւոր տեղերն են Լիէժ, Մոնս,
Շառլուուա, և այլն . ընտիր հանքն է
Մոնսինը :

Հանքածիոյ գիւտն 'ի Գեճիա առա-
ջին անգամ եղեր է յամին 1202: Վեր-
ջին քառասուն տարուան մէջ Գեճիոյ
հանքածիոյ մշակութիւնը շատ աճե-
ցաւ . 1836. թուոյն թերքն էր 3,074,464
տակառաշափ . իսկ 1876 թուոյն եղաւ
15,329,578 տակառաշափ :

Տասնորդական դրուրիւն 'ի Պարսս .
Պարսից տէրութիւնն ընդունելով տաս-
նորդական զրութիւնն, իր ոսկի՝ արծաթ
և պղինձ գրամմերն ըստ այնմ ձուլեր է .

Այս գրամմերը մէկ կողմանէ ունին
տէրութեան նշանը, և միւս կողմանէ
Շահին կիսարձանը . և կը բաժնուին .

Ոսկեղբամք . 2-թիւմէն . . . ֆու . 20

— 1-թիւմէն . . . » 10

— ½-թիւմէն . . . » 5

—	2-հազարի . . . ֆու . 2
Արծաթաղբամք . 2-գուան . . . » 2	
—	1-գուան . . . » 1
—	5-ահճի . . . » 0.25
Պղնձաղբամք . 2-շահճի . . . սանդիմ 10	
—	4-շահճի . . . » 5

Երկարակեցուրիշն քանի մը կեն-
դանեաց . — Ըստ կարծեաց բնախօ-
սից՝ արջն հազիւ 20 տարի կ'ապրի . շու-
նը 20 տարին գրեթէ շանցնիր, նոյնպէս
գայլն . իսկ աղուէսը 14 կամ 16 տարի
կ'ապրի : Ուուիւծն ինչուան խոր ծերու-
թիւն կը հասնի, և առիւծ մը մինչև 70
տարի ապրեր է : կատուն միջն հա-
շուով 14 տարի կ'ապրի . նապաստակն
7 կամ 8 տարի . և ճագարն 7 տարի :
Ապացուցուած է որ փիղը կ'ապրի մին-
չև 400 տարի : կը պատմեն թէ Աղեք-
սանդր Մեծն յետ նուածելու հնդիկ իշ-
խան մը, առաւ անոր մէկ փիղն՝ որ քա-
յութեամբ պայտպաներ էր իր տէրը .
Փղին անունը գրաւ Այար, և նուիրեց
զայն Արև աստուածոյն, հրամայելը որ
վզէն կախեն հետևեալ արձանագրու-
թիւնն . Աղեքսամնդր որդի Արամազ-
դայ՝ նուիրեց Այար Արև աստուա-
ծոյն, և ազատ ժողուն զայն . 354 տա-
րի ետքը նորէն ողջ բռներ են նոյն
փիղը :

Խողեր եղեր են որ մինչև 30 տարի
ապրեր են . կ'ըսեն թէ ոնդեղիւլը հա-
զիւ 20 տարի կ'ապրի : Զի մը մինչև 62
տարի ապրեր է, ուր ձին միջն հա-
շուով 20-25 տարի կ'ապրի : Երբեմն
ուզտերը մինչև 100 տարի կ'ապրին : Եղ-
ջերուն ինչուան խորին ծերութիւն կը
հասնի . իսկ ոչխարն հազիւ 10 տարի
կ'ապրի . և կովը ինչուան 15 տարի կ'ա-
պրի : Բնազնին մը հաւանական կը հա-
մարի թէ պալենա ձուկն երբեմն մինչև
1000 տարի ապրի . ընդհակառակն
զլիինը միայն 30 տարի կ'ապրի : Վեն-
նա արծիւ մը մեռաւ 104 տարեկան .
շատ անգամ ագռաւ ինչուան 100

տարի կ'ապրի, և կարապն 300 տարի . Անգղիա կարապի մը կմախքը կայ որ 200 տարի ապրեր է : Հաւալուան ալ երկայն կ'ապրի . կրիայնը ինչուան 107 տարի ապրեր է :

Նիսկարաւ առողջեալ . — Այս տարուան զարմանալի ձեռուուան մէջ նորօրինակ երեցիթ մ'ալ պատահեցաւ : Նիսկարաւ Ամերիկայի երեկի ջրվէժն սառեցաւ . Անդունդին վրայ առկախեալ ծիրանի գոտիներու անթիւ բազմութին անհետացաւ, կամ սառուցեալ քօղերու փոխուեցաւ . և փոխանակ ալեաց և փրփորի յորձանաց՝ սառուցեալ կամարակապներ ձևացան : Այն սառէ կամուրջն, ինչպէս կը կարծուէր, տըխուր արկածի մը տեսարան եղաւ, որ և կրնար աւելի ահաւոր հետևանք ունենալ :

Փետրուարի 26ն լրւաւորութիւն մը կատարուեցաւ այս կամրջին վրայ առանց կրյ և աղիւոյ շինեալ, այն անուանի ճարտարապետին ձեռքով՝ որ է բնութիւնն, օգնութեամբ վարժ որմնադրին՝ որ կը կոչուի Յուրաք՝ 20 աստիճան վար քան զ՞օ, հարիւրամասն լերմաշափով : Լուսաւորութիւնն յամենայնի սրանչելի եղաւ . խսկիներ փուռած էին սառին վլրայ, բաց թողրվ միայն միջոց մը . նոյն կամրջին վրայ հաղորդուած էր կազի խողովակ մը . և մօտ քաղաքներէն եկած էին երևելի սառի վրայ սահողներ, և երածշտութիւնք երկու ափանց վրայ իրենց եղանակները կը հնչեցնէին : Ահազին բազմութիւն մը կը խոնէր այնքան զարմանալի կերպով կախուած սառի կոյսին վրայ :

Ռւրախութեան ձայներն, ծիծաղներն, երգք փոփոխակի կը շարունակուէին անդադար : Յանկարծակի սարսափման ճիշ մը լսուեցաւ օդուն մէջ, որուն յաջորդեց ահաւոր անկում մը սառորակայ գետակին մէջ :

Վիրաւորելոց կոծը, և կամրջի վրա-

յէն նիսկարայի կէս սառուցեալ ջրոց մէջ անկելոց ցաւոց աղաղակները՝ մեծ դժբաղդութիւն մը գումեցին, կամըրջին մէկ մասը կործաներ էր, մէկտեղ տանելով միայն եօթը դժբաղդներ . որոնցմէ երեքը յետ շատ աշխատութեան կրցեր են աղատիլ :

Բաղմութիւնն մէկէն փախաւ այն դժբաղդ տեղէն, և բարեբաղդաբար . վասն զի քանի մը վայրկենէն ետքը կործանեցաւ բոլոր բովանդակ կամուրջը աննկարագրելի որումմամբ :

Զարմանալի բան . ջահ մը որ ամենանիշդ կամրջին մէջ տեղը հաստատուած էր և մեծ ճրագներով լրւաւորուած, սառի զանգուածի մը մէջ կանգուն կը կենայ լրւաւորելով ձախորդաբար ահաւոր տեսարանը : Այսպէս այս սառուցեալ կամուրջն, որ ամեն ճարտարապետ զարմացուցեր էր, քըսաններկու օր դիմանալին ետքը կործանեցաւ :

Հինն եղեսիա . — Խտալական լրագրի թղթակից մը՝ Ասիս Տանկաստանէն հետևեալ հետաքրքրական տեղեկութիւններս կու տայ Ռւուհա կամ Ռւուֆա քաղքին, որ է հինն եղեսիա, արդի վիճակին վրայ :

Քիչ ճանապարհորդ այցելած է այս հին քաղքիս, որ 260 հազարամետր հեռու է Հալէպէն : Թողրավ զՊիրինիք և անցնելով զիփրատ, ճանապարհորդին աչքին ըսին ամսյութիւններ և կրյային ըլուրներ կը ներկայանան, որոնց վրայ բնաւ բոււաց հետք մը չտեսնուիր : Ռւուհա զուաբճակի հովտի մը մէջ կառուցեալ է, ուր կ'իջեցուի մեծայալզ սօսեզ և թթինեազ զարդարեալ լերանց կրճէ մը . երկու ինքնագուղիս աղբիւրներ ամսանալին տաքութեան ատեն տեղւոյն բնակութիւնը ցանկալի կ'ընեն : Լերան գաղաթը զեղեցիկ յունական դղեակ մը կը տեսնուի փոքրիկ խրամով շրջապատեալ : Նոր քազաքն,

որ 48,000 բնակիչ ունի, կղղիացեալ ըլլան մը վրայ շինուած է, և այնպիսի աւերակ և քեալ վիճակի մէջ է՝ որ յատուկ է այս սահմաններու ամեն քաղաքներուն : Սակայն կան գեղեցիկ մզկիթներ, բամպակի, կտաւի և ոսկերչի գործատուններ : Ուսէհա՛ ըստ կարծեաց իրեն բնակաց տաճկաց, քրիստոնէից և հրէից՝ ամենահին քաղաքներէն է . Աբրահամու ծննդեան քաղաքն կը համարուի, և շատ յարգելի եղած մզկիթ մը կը նշանակէ այն տեղն ուր ծնաւ ընտրեալն Աստունդոյ :

Երկու աղբերաց ականակիտ ջրերն ամեն տեսակ ձուկ կը պարունակեն՝ մանաւանդ ծածան (cargé) որոնց համար կը կարծեն մահմետականք թէ նախահօն Աբրահամու հետ խորհրդաւոր վերաբերութիւն մ'ունենան . այս ձկներս այնպէս ընտանի են՝ որ խմբու-

վին վտակին ափոնքը քալող անձանյ ետևէն կ'ընթանան :

Ուսէհային եղական բաներէն մէկն ալ է լերանց մէջ փորուած գերեզմաններն . որոնցմէ հարիւրաւոր կան : Այս դամբաններս շատ աղջկ պահուած են, և զանազան մեծութեամբ. մէկ անձէ մը սկսեալ մինչև ամբողջ ընտանեաց մը համար :

Օտարական ճանապարհորդն նորօրինակ սովորութիւն մը կը գտնէ Ուսէհայի տղոց մէջ, որոնք ամենքն ալ մեծ օղակներ կը կրեն քթերնէն : Այս սովորութիւնս Աբրահամու ժամանակէն ըսկսեալ է, կ'ըսեն : Երբ այս անհանդիսա զարդարանքս կը հանեն, տասնութեց տարուան մօտ, օղակն անդաց մէջ ծակ մը կը թողար որ դժուարաւ ամբողջապէս կը գոցուի :

Ի ՀԱՄԲՈՐՁՈՒՄՆ ՓՐԿՉԻՆ

ՆՈՒԱԳ

Օրք հովաշունչ՝ այեր պայծառ և զըւարթ,
Միւգ քաղցրաբոյր, երկինք են լուրթ կապուտակ .
Փայլէ արփի յեթերամեմ զըմբեթարդ,
Ամպախաղացն հըրճուի փաղփուն պարունակ .

Եող սփիւռ հեղիկ ճօնէ զեփիւռ ըզսաղարթ,
Թըրչունկը նըւազս երգեն յաւաշ ներդաշնակ,
Զինջ տրընջեան վայելք քաղցունք՝ շուք և զարդ .
Զոր քան պատմելն զմայլելն է ինձ անուշակ :

Ահա ամնպոց քոյլ թափանցանց հուղանի
Հորդել Փըրկին շաւիղ շըքել երկնաշու .
Ալանայ փառք պըճնեալ ամպովք գեղանի .
Ճուարթունք զիւրն նըւագաւոր օրհներդու .
Լուր, մարդ, Փըրկչիդ, լուր սուրբ շըրթանց քաղցրենի .
Ահա շաւիղ, եկ զիմ կընի, եկ և դու :

1879 Մայիս 22.

ՄԻՀՐԱՅ ՏԱՐԱԾԵԱՆ
ԱՀ. Առւրամ-Ռափայելեան Վարժարանի .